




**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ»  
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ**

Գլխավոր տնօրեն

Կ. Հարությունյան



**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ  
արտադրատնտեսական աշխատանքի կազմակերպման  
առանցքային ուղղություններ  
(«Գեղամա» մասնաձյուղ)**

19.11. 2015թ.

12:00

Ներկաներ՝

Կ. Հարությունյան	Գլխավոր տնօրեն
Ա. Թոխունց	Գլխավոր տնօրենի տեղակալ, Իրացման տնօրեն
Դ. Գրիգորյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Տեխնիկական տնօրեն
Կ. Հայրապետյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Անվտանգության և վերահսկողության տնօրեն
Ս. Պողոսյան	Գլխավոր տնօրենի տեղակալ, Ընդհանուր հարցերով տնօրեն
Գ. Բաղայան	Ներքին վերահսկողության վարչության պետ
Գ. Ղազարյան	Տեխնիկական տնօրենի խորհրդական էներգախնայողության գծով
Կ. Մնացականյան	«Գեղամա» մասնաձյուղի տնօրեն
	Մասնաձյուղի ներկայացուցիչներ, գլխավոր ճարտարագետ, մասնաշտաբի տնօրենի տեղակալներ, ՇԷՑ պետեր

## ՕՐԱԿԱՐԳ

1. Հաստիքացուցակների վերանայում, հաստատում
2. Տրանսպորտային խնդիրներ
3. Դեֆիտորական պարտքեր
4. Տեխնոլոգիական կորուստներ
5. Այլ հարցեր

### ԼՍԵՑԻՆ՝

Գլխավոր տնօրեն Կ. Հարությունյանին.

Ընկերության Գլխավոր տնօրենը ներկայացրեց խորհրդակցության օրակարգային հարցերը և աշխատանքի կազմակերպման հիմնական ուղղությունները՝

- Սույն թվականի դեկտեմբերի 6-ին անցկացվելիք հանրաքվեին ընտրատարձքները պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրամատակարարմամբ:
- Ընկերությունը սույն թվականի հունվարի 1-ից աշխատելու է նոր հաստիքացուցակներով, որոնք մասնաճյուղերի մասով պետք է բացառեն ֆունկցիոնալ տարբերությունները և տարբերվեն միայն ցանցերի քանակով՝ պայմանավորված սպասարկման տարածքների քանակությամբ:
- Ընկերությունում իրականացվող տրանսպորտային միջոցների գույքագրումից հետո նախատեսվում է դուրս գրել բոլոր շահագործմանը ոչ պիտանի տրանսպորտային միջոցները կամ օտարել հնամաշ տրանսպորտային միջոցները իրենց մնացորդային արժեքով՝ ձեռքբերման առաջնահերթությունը տալով տրանսպորտային միջոցները շահագործող աշխատակիցներին:
- Ընկերությունում անկացվում է դեֆիտորական և կրեդիտորական պարտքերի գույքագրում, որի ավարտից հետո անհուսալի դեֆիտորական պարտքերը դուրս կգրվեն, իսկ մնացածը անհրաժեշտ է հավաքագրել իրավաբանական անձանց մասով մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը, բնակիչ բաժանորդների մասով՝ մինչև 2016 թվականի մարտի 1-ը: Նշված ժամկետներից հետո դեֆիտորական պարտքի ձևավորումը էլեկտրաէներգիայի գնման մասով Ընկերությունում կհամարվի անթույլատրելի և յուրաքանչյուր պատասխանատու անձի աշխատանքի գնահատականը կտրվի նաև այս ցուցանիշով:
- Ներկայումս Անվտանգության և վերահսկողության տնօրինության կողմից կատարվում են համապատասխան ստուգումներ՝ Ընկերության աշխատակիցների և բաժանորդների կողմից օրինախախտ գործողությունների հայտնաբերման և բացառման ուղղությամբ:

- Ընկերության հաշվեկշռում առկա հաշվիչների ստուգաչափման ժամկետները մեծամասամբ լրացած են, տարվում են համապատասխան աշխատանքներ վերջիններիս ստուգաչափման, կապարակնքման և անհրաժեշտության դեպքում փոխարինման մասով:
- Արգելվում է սպասարկող և շահագործող անձնակազմի ներգրավումը արտաժամյա աշխատանքներին՝ առանց հրամանագրման: Արտաժամյա աշխատանքի անհրաժեշտություն կարող է առաջանալ միայն վթարային իրավիճակներում:

## Հանձնարարվեց՝

1. Տեխնիկական տնօրեն Դ. Գրիգորյանին, Իրացման տնօրեն Ա. Թոխունցին և «Գեղամա» մասնաճյուղի տնօրեն Կ. Մնացականյանին.
  - 1.1. կազմակերպել ստուգաչափման ժամկետները լրացած հաշվիչների ստուգաչափման և փոխարինման աշխատանքները ըստ ժամանակացույցի: Ժամանակացույցի կազմման ժամկետ՝ 01.12.2015թ.:
  - 1.2. վերահսկել և վերլուծել կասկածելի եզրակացություններով հաշվիչները, դուրս բերել նմանատիպ հաշվիչները շրջանառությունից: Ժամկետ՝ 01.10.2015թ.:
  - 1.3. ներկայացնել թերբեռնված տրանսֆորմատորների և էլեկտրաէներգիայի հաշվառման սարքերի փոխարինման առաջարկ: Ժամկետ Ժամկետ՝ 01.12.2015թ.:
2. Իրացման տնօրեն Ա.Թոխունցին և ՏՏ դեպարտամենտի պետ Վ.Գսպոյանին. մշակել նվազագույն հաշվետվական վերլուծականների ալգորիթմներ և մոդուլներ՝ տեղայնացնելով մասնաճյուղերում: Ժամկետ՝ 30.11.15:
3. Անվտանգության և վերահսկողության տնօրեն Կ. Հայրապետյանին. իրացման տնօրինության կողմից տրամադրված տվյալների հիման վրա կատարել տեղադրված հաշվիչների մոնիթորինգ /ընտրանքային սկզբունքով/:
4. Իրացման տնօրեն Ա. Թոխունցին, Անտանգության և վերահսկողության տնօրեն Կ. Հայրապետյանին և Ներքին վերահսկողության վարչության պետ Գ. Բաղայանին. ներկայացնել «Գեղամա» մասնաճյուղի տարածքում արձանագրված հավելագրումների վերլուծություն: Ժամկետ՝ 24.11.2015թ.
5. Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանին.
  - 5.1. ուսումնասիրել և ներկայացնել անանցանելի տարածքների սպասարկման համար ամենագնաց մեքենաների ձեռքբերման առաջարկ,
  - 5.2. ուսումնասիրել և ներկայացնել հաշվառման կետերի և էլեկտրաէներգիայի հաշվիչների կապարակնիքների ձեռքբերման առաջարկ, կազմակերպել անհրաժեշտ քանակությամբ կապարակնիքների ձեռքբերումը: Ժամկետ՝ 24.11.2015թ.:

- 5.3. ընտրատարածքների անխափան էլեկտրամատակարարման նպատակով կազմակերպել անհրաժեշտ քանակությամբ լապտերի ձեռքբերումը և տրամադրումը Ընկերության մասնաճյուղերին: Ժամկետ՝ 24.11.2015 թ.: Էկոնոմիկայի և ֆինանսների տնօրենի ժ.պ. Ա. Արշակյանին: նախատեսել և տրամադրել մասնաճյուղերին որոշակի քանակությամբ դրամական միջոցներ՝ հանրաքվեի օրը անհրաժեշտ հրատապ ծախսումները կատարելու նպատակով:
6. Ընդհանուր հարցերով տնօրեն Ս. Պողոսյանին և Էկոնոմիկայի և ֆինանսների տնօրենի ժ.պ.Ա. Արշակյանին. ֆորս-մաժորի հետևանքով մասնաճյուղերի կողմից կատարված բոլոր տեսակի ծախսերը ներառել Ընկերության կորպորատիվ բյուջեի մեջ:
7. Էկոնոմիկայի և ֆինանսների տնօրենի ժ.պ. Ա. Արշակյանին. ներկայացնել հաշվարկներ Երևան քաղաքից դուրս Ընկերության կողմից վարձակալվող բոլոր տարածքների մասով: Ժամկետ՝ 26.11.2015թ.
8. «Գեղամա» մասնաճյուղի տնօրեն Կ. Մնացականյանին.
- 8.1. ներկայացնել մասնաճյուղի հաստիքացուցակում փոփոխությունների կատարման առաջարկներ (ժամկետ՝ 10.12.2015թ.) և մինչև 01.01.2016թ. փոփոխված աշխատանքային պայմանագրերը ներկայացնել վերակնքման:
- 8.2. մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը իրականացնել իրավաբանական անձ բաժանորդների և մինչև 2016 թվականի մարտի 1-ը՝ ֆիզիկական անձ բաժանորդների դեբիտորական պարտքերի գանձում (անհրաժեշտության դեպքում կնքելով պարտավորությունների մարման ժամանակացույցեր) և վերը նշված ժամկետներից հետո բացառել բաժանորդների մոտ դեբիտորական պարտքերի գոյացումը:
- 8.3. վերակնքնել հանրային սեկտորի բաժանորդների հետ էլեկտրաէներգիայի մատակարարման պայմանագրերը՝ կատարելով անհրաժեշտ ճշգրտումներ (հասցե, կոդ, անվանում և այլն):
- 8.4. սպառողների տեխնոլոգիական միացումների աշխատանքները ՀՀ ՀՄԿՀ կողմից սահմանված ժամկետներում իրականացնելու նպատակով, վարձակալության հիմունքներով ներգրավել անհրաժեշտ հատուկ տեխնիկա:
9. «Գեղամա» մասնաճյուղի գլխավոր ճարտարագետ Հ. Մանուկյանին. հայտարարել արձանագրային նկատողություն սպառողների տեխնոլոգիական միացումների աշխատանքները ոչ պատշաճ կազմակերպելու համար և ներկայացնել բացատրություն մասնաճյուղի տարածքում սպառողների տեխնոլոգիական միացման աշխատանքները ժամկետների խախտմամբ կատարելու վերաբերյալ:

Բ  
\*  
Ե

Կատարող՝ Դ. Մանուկյան